

ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ (ՄԼԱՎՈՆԱԿԱՆ)

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Գիտական աշխատանքի

զծով պրոռեկտոր,

Ֆ-մ.գ.թ., փ.գ.դ.

Պ.Ս. Ավետիսյան



ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ Ս.Ա. Կարապետյանի «Հայկական
ցեղասպանությունը իսպանական գրականության մեջ» թեմայով Ժ. 01.07 -
«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ս.Ա. Կարապետյանի «Հայկական ցեղասպանությունը իսպանական գրականության
մեջ» ատենախոսությունը նվիրված է ժամանակակից իսպանալեզու գեղարվեստական
գրականության ուսումնասիրմանը, որում այս կամ այն ձևով ներկայացվում է
Օսմանյան կայսրությունում 1915թ. Հայոց ցեղասպանության հարցը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ բաժանված
ենթագլուխների, եզրակացությունից և գրականության ցանկից (78 անուն): Ներածության
մեջ հիմնավորված է թեմայի ընտրությունը, ընդգծվում է արդիականությունը, որոշվում է
հետազոտության առարկան, բնութագրվում է հետազոտության գիտական նորույթը,
սահմանվում է հիմնական նպատակը, խնդիրները:

ցեղասպանության տրավմատիկ փորձի նկարագրման տեսանկյունից: Մ.Ա.Կարապետյանի հետազոտությունը կարելի է մեկ շարքում դնել հայ և արտասահմանցի ժամանակակից գրականագետների աշխատանքների կողքին, որոնց նպատակը 20-րդ դարավերջին և 21-րդ դարակզբին գերիշխող պատմական անցյալում անձի դեմ կատարված հանցագործությունների հավաքական հիշողության գեղարվեստականացման եղանակների վերանայումն է: Հեղինակի գիտական իմացությունը թույլ է տալիս մեզ աշխատանքը համարել որոշակի ներդրում գրականագիտության մեջ, մասնավորապես, այնպիսի հատվածներ, ինչպիսիք են արտասահմանյան գրականության պատմությունը, հայ գրականության պատմությունը, հատուկ դասընթացներ ընթացիկ գրական գործընթացի ուսումնասիրման վերաբերյալ և այլն:

Մ.Ա.Կարապետյանի հետազոտության գիտական և թեմատիկ նորույթը կասկածից վեր է. ժամանակակից գրականագիտության մեջ գործնականում բացակայում է պատմական կոնկրետ երևույթի (Հայոց ցեղասպանություն) վերաբերյալ համակարգված ուսումնասիրությունը եվրոպական այս կամ այն երկրի գրականության մեջ: Նախքան Հայոց ցեղասպանության թեմային վերաբերող ստեղծագործությունների վերլուծության անցնելը, ատենախոսության ներածության մեջ հեղինակը ներկայացնում է պատմական համառոտ ակնարկ՝ հայ-խաչանական մշակութային փոխհարաբերությունների պատմության մասին, ինչը ցույց է տալիս երկու ազգերի մշակույթների միջև փոխազդեցությունների դաշտը և դրանով իսկ հիմնավորում է ընտրած թեմայի արդիականությունն ու մշակութային-պատմական հիմքը: Գեղարվեստական ստեղծագործությունները, որոնք դարձել են երեք գլուխների ուսումնասիրության առարկան, ընդգրկում են գրականության բավականին ծավալուն հատված՝ ինչպես ժանրային-ոճական բազմազանության (ինքնակենսագրական արձակ, ուղեգրություն, պոեզիա և այլն), այնպես էլ պատմամշակութային տեսանկյունից վերլուծության են ենթարկվել ութ ստեղծագործություններ՝ զբաղեցնելով XX-XXI դարերի ժամանակակից գրականության պատմության ընդարձակ ժամանակահատված (1982-2008թթ): Երեք գլուխներից յուրաքանչյուրում ներառված ստեղծագործության

վերլուծությունը պարունակում է ինչպես նկարագրական, այնպես էլ վերլուծական դիտարկումներ, ինչը հեղինակին թույլ է տալիս ամբողջությամբ և բովանդակալից բացահայտել նշված թեման:

Ուսումնասիրվող թեմայի հետագա զարգացման համար որպես առաջարկություն հարկ է նշել, որ որոշ ձևակերպումներ չեն համապատասխանում այս տեսակի որակավորման աշխատանքներին: Օրինակ «ազգային տրավմատիկ ցավ», «սարսափելի իրադարձություններ» և այլն: Բացի ոճական թերություններից, նշենք, որ.

1. Ատենախոսության որոշ մասերում առաջանում է համեմատական մեթոդի (ցեղասպանություն և ֆրանսիական գրականություն, ցեղասպանություն և ամերիկյան գրականություն, ցեղասպանություն և թուրքական գրականություն և այլն) օգտագործման անհրաժեշտություն, բայց գլուխներից ոչ մեկը չի պարունակում այսպիսի մոտեցում, ինչը կարող է հարստացնել այս աշխատանքը և ընդլայնել տվյալ թեմայի հետազոտական շրջանակը:

2. Ատենախոսությունում հիմնական շեշտը դրված է իսպանական ժամանակակից գրականության մեջ Հայոց ցեղասպանության թեմայի մեկնաբանմանը, բայց հեղինակը մատենագիտական ցանկում չի ընդգրկում 20-րդ դարում ցեղասպանությունների ուսումնասիրության հիմնարար աշխատանքները, ինչի կարիքը զգացվում է արդեն ատենախոսության ներածության մեջ, որտեղ հեղինակի մեթոդաբանական ընտրությունը բավականին թույլ է դրսևորվում: Հայ և արտասահմանցի հետազոտողների այդպիսի տեսական-փիլիսոփայական ուսումնասիրությունների օգտագործումը կարող է դառնալ ընտրված թեմայի հետագա գիտահետազոտական զարգացման ուղիներից մեկը:

3. Ոչ այնքան համոզիչ են պոստմոդեռնիստական տեքստի և պոստմոդեռնիզմի սահմանների ընկալումը հետազոտողի կողմից ուսումնասիրվող ստեղծագործություններում:

Չնայած այսպիսի ուսումնասիրության հետագա հարստացմանն ու ընդլայնմանը վերաբերող մեկնաբանություններին, կասկած չկա, որ այս թեկնածուական

ատենախոսությունը կարող է օգտագործվել արտասահմանյան գրականության պատմության դասավանդման ընթացքում, ինչպես նաև նյութ կձևառայի համալսարանական սեմինարների համար, որոնք նվիրված են ցեղասպանության տրավմատիկ փորձի գեղարվեստականացման թեմայի ուսումնասիրմանը և այլն:

Ատենախոսությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Ս.Ա. Կարապետյանի աշխատանքը յուրօրինակ հետազոտություն է՝ գրված ատենախոսությանը ներկայացվող պահանջներին համապատասխան, և դրա հեղինակը արժանի է իր հայցած քանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ռուս և համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի նիստում, (գրառում N1, 25 օգոստոսի 2020թ.):

Ատենախոսության քննարկմանը մասնակցել են բ.գ.թ., դոցենտ Լ.Ս. Մելիքսեթյանը, բ.գ.թ., բ.գ.թ., դոցենտ Ն.Կ. Գոնչար-Խանջյանը, բ.գ.թ. Տ.Ն.Ամիրյանը, բ.գ.թ. Ա.Ա. Թադևոսյանը, բ.գ.թ. Ս.Ս. Մարգարյանը:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
համաշխարհային գրականության և մշակույթի
ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Մելիքսեթյան Լ.Ս.



Հաստատում եմ՝
ՀՌՀ գիտքարտուղար
բ.գ.թ. Կասաբարովա Ռ. Ս.

